ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՀԱՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու, ԵՊՀ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՀԻՆ ԱՐՏԱՇԱՏԻՑ

Ներկայացվող հնագիտական առարկաները հայտնաբերվել են ոչ պարբերական, հնագիտական ուսումնասիրություններին բնորոշ գիտական մեթոդիկայի եղանակներով: Ավելին՝ դրանք ի հայտ են եկել հանցավոր ճանապարհով՝ հնագիտական հուշարձանները ավերելու եւ կողոպտելու, թանկարժեք իրեր գտնելու եւ վաճառելու նպատակով: Անշուշտ, հնագիտական հուշարձանների հարեւանությամբ գտնվող համայնքների ղեկավարները տեղյակ են այս արատավոր, հայրենական մշակույթը ավերող երեւույթի մասին, որն արդեն դարձել է մասնագիտացած ու զանգվածային:

Երեւանի «Վերնիսաժ» շուկայում հնություններ վաճառողի մոտ նկատելով հնագիտական ծանոթ ժամանակաշրջանի առարկաներ՝ սկսեցի զգուշությամբ հարցաքննել եւ դժվարությամբ կարողացա պարզել, որ դրանք բերել են հին Արտաշատի տարածքի հարեւանությամբ՝ մի քանի կիլոմետր դեպի արեւելք գտնվող Նոր Կյանք եւ Շիրազ գյուղի բնակիչները: Հետեւաբար, ամենայն հավանականությամբ, հուշարձանի կողոպուտը կատարվել է Արտաշատ մայրաքաղաքի արեւելյան հատվածում փռված եւ գյուղատնտեսական աշխատանքներով արդեն մասամբ ավերված, մասնագիտական գրականությունից հայտնի արեւելյան երկու դամբարանադաշտերից[1]: Հայտնի է, որ անտիկ ժամանակաշրջանի տարբեր տիպերի թաղումների մեծ մասը կատարվել է ոչ խորը մակարդակում, այդ պատճառով հնագիտական նյութերը հասանելի են դառնում գանձախույզներին:

Մեր տրամադրության տակ եղած հնագիտական նյութը դասակարգելուց եւ լուսանկարելուց հետո պարզ դարձավ, որ դրանք մետաղյա

---

[1] Տես **Б. Аракелян,** Основные результаты раскопок древнего Арташата в 1970-1973 гг., Историко-филологический журнал, 1974, թ. 4. նույն հեղինակի՝ «Հին Արտաշատ», Երեւան, 1975. **Ժ. Խաչատրյան**, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր, Երեւան, 1981, էջ 6:

Աղյուսակ I

նկ. 1. բրոնզե դաշույն

նկ. 2. երկաթե նիզակ

նկ. 3. նետասլաքներ

նկ. 4. բրոնզե մեդալիոն



նկ. 5, 6. բրոնզե բռնակներ

Աղյուսակ II

Նկ. 1-5. արծաթե եւ բրոնզե ապարանաջաններ

Աղյուսակ III

Նկ. 1-3. Տիգրան Բ.-ի արծաթե եւ բրոնզե դրամները

Նկ. 4. Արիոբարզան Գ.-ի արծաթե դրախման

Նկ. 5. Օգոստոս կայսեր արծաթե դենարը

առարկաներ են՝ զարդեր, զենքեր, դրամներ (արծաթ, բրոնզ, երկաթ):

Հաշվի առնելով հնագիտական նյութի հայտնաբերման ոչ գիտական եղանակները՝ կփորձենք, այնուամենայնիվ, Հայաստանի եւ հարեւան երկրների համապատասխան զուգահեռներով եւ նման օրինակներով հնարավորին չափ մատչելի դարձնել մասնագետների ուշադրությանը ներկայացվող սույն հաղորդումը:

Զենքեր. *1. Բրոնզե դաշույն (աղ. I, նկ. 1): Լավ պահպանված, ակոսավոր շեղբ, երկարությունը՝ 20 սմ, միջին լայնությունը՝ 3 սմ: Սրացող կոթառի մեջ մտնող հատվածի երկարությունը՝ 6 սմ: Հավանաբար՝ թաղման գույք: Քիչ հանդիպող նման օրինակներ հայտնի են Հայաստանի Ք. ա. Բ.-Ա. դդ. թաղումներից*[2]*:*

2. Երկաթյա նիզակի շեղբ (աղ. I, նկ. 2): Խողովակաձեւ, փայտին հագնող կոթառ, որից սկսվում է մինչեւ վերջ չհասնող երկկողմանի, թեթեւակի ուռուցիկ միջնաջիղ: Նմանօրինակ նիզակների շեղբեր հայտնաբերվել են Արտաշատում, Գառնիում, Սիսիանում, Վրաստանի, Ադրբեջանի համաժամանակակից հուշարձաններում՝ տարբեր տիպի թաղումներից: Այս դաշույնները, նաեւ ուղեկցող նյութերով, թվագրվում են Ք. ա. Ա. - Ք. հ. Ա.-Բ. դդ.[3]*:*

3. Նետասլաքներ (աղ. I): Մեր տրամադրության տակ եղած երկաթյա չորս օրինակները տարբեր տեսակների են, վատ պահպանված: Ներկայացվող բոլոր նետասլաքները անտիկ ժամանակաշրջանի հուշարձաններում հայտնաբերված զենքերի ամենատարածված տեսակներն են եւ սերում են նախաուրարտական եւ հետագա բրոնզե օրինակներից: Որոշ աննշան առանձնահատկություններով հարատեւում են մինչեւ անտիկ ու վաղ միջնադարյան ժամանակաշրջաններ: Այսպես կոչված «սկյութական», երկկողմանի, ճանկավոր նետասլաքները ծագում են Ք. ա. Զ. դ. եւ հարատեւում մինչ Ք. հ. Ա.-Բ. դդ. (նկ. 1): Եռաթեւ օրինակները եւս նույն զարգացումն ունեն, բայց լայն տարածում են ստանում հատկապես

---

[2] Տես **Б. Аракелян,** Арташат. I, стр. 3, աղ. XX. նույն հեղինակի՝“ Гарни II, результаты раскопок 1951-1955 гг.”, Ереван, 1957, էջ 16. **Ж. Хачатрян**, Гарни V (Античний некрополь) результаты раскопок 1956-1972 гг., Ереван, 1976, էջ 85. նույն հեղինակի՝ «Սիսիանի դամբարանը (մ. թ. ա. I դ. երկրորդ կես)», Երեւան, 2009, էջ 72, աղ. XIII:

[3] Տես **Б. Аракелян,** Арташат I, стр. 30, աղ. XXX. նույն հեղինակի՝ “Гарни II, результаты раскопок 1951-1955”, Ереван, 1957, стр. 45, նկ. 11. **Г. Тирацян,** Культура Древней Армении, Ереван, 1988, стр. 138, նկ. 11, 33. **С. Казиев,** Археологические раскопки в Мингечауре, Альбом кувшинных погребений, Баку, 1960, табл. XXXV, նկ. 3, 4. **Н. Тушишвили, Л. Амиранашвили и др.,** Археологическая экспедиция Алгетского ущелья (1983-1985 гг.), Тбилиси, 1987, աղ. XXVII:

հելլենիստական ժամանակաշրջանում (նկ. 3): Ամենատարածված տարատեսակը եռաթեւ նմուշն է: Միայն Արտաշատի Ա. բլրից գտնվել է մոտ երեք հազար օրինակ: Այսպես կարելի է բնութագրել նաեւ տերեւաձեւ ու քառաթեւ նմուշները (նկ. 2, 4), որոնք առանձնահատկություններով եւ ուղեկցող նյութերով թվագրվում են Ք. ա. Բ.-Ա. - Ք. հ. Ա.-Դ. դդ[4]*:*

Մետաղյա զարդեր. *1. Բրոնզե մեդալիոն կլորավուն (աղ. I, նկ. 4): Առանցքային, ուղղահայաց մասն ավարտվում է նռան ծաղիկով: Նույնպիսի ծաղիկներ պատկերված են առանցքի աջ կողմում: Առանցքից աջ՝ ուղղանկյուն, նեղ կախիկ, ըստ երեւույթին կաշվե վզնոցի ծայրը հագցնելու համար, նռան երեք ծաղիկ: Ամբողջ պատկերագրությունը առնված է փոքր, կլոր անցքերով պարփակած շրջանակի մեջ: Զարդի ճախ հատվածը կոտրված է, բայց, անկասկած, կրկնում է աջ կողմի պատկերագրությունը, որտեղ եղել է երկրորդ կախիկը: Մեզ հասանելի մասնագիտական գրականության մեջ նմանեցված զուգահեռներ չհաջողվեց գտնել: Ամենայն հավանականությամբ, մեդալիոնը արեւելահռոմեական պրովինցիաների (Սիրիա, Փոքր Ասիա) արտադրանք է, թեեւ չի բացառվում պարթեւական կամ ավելի ուշ՝ սասանյան ծագումը, որտեղ հանդիպում են նռան պատկերագրությամբ առարկաներ:*

2. Ապարանջաններ (աղ. II, նկ. 1-5): Առանձին-առանձին յուրաքանչյուր նմուշին չանդրադառնալու նպատակով նշենք միայն, որ մեր տրամադրության տակ եղած ապարանջանների տեսակները, ծագելով նախաուրարտական եւ հետուրարտական ժամանակաշրջաններում, հարատեւում են անտիկ, նաեւ հելլենիստական դարաշրջաններում: Դրանք հիմնականում կենդանակերպ, իրար չմիացող, իրար վրա հագնող վերջավորություններով նմուշներ են: Անտիկ եւ հելլենիստական թաղումներում առավել հաճախ են հանդիպում նաեւ արծաթից պատրաստված ապարանջաններ: Մեր հավաքածուի մեջ կա նաեւ իրար չմիացող վերջավորություններով, տափակ իրանով արծաթյա ապարանջան որ, հավանաբար, Հռոմի արեւելյան՝ սիրիական պրովինցիայից ներմուծված օրինակ է: Ներկայացված օրինակները Հայաստանի եւ հարեւան երկրների անտիկ

---

[4] Տես **Б. Аракелян**, Арташат I, стр. 30, աղ. XXIX, XXX. **Ж. Хачатрян**, Гарни V, աղ. XX. **Г. Тирацян,** նշվ. աշխ., էջ 139, նկ. 36. **Ռ. Թորոսյան, Ֆ. Տեր-Մարտիրոսով**, Ուշ հելլենիստական ժամանակաշրջանի դամբարաններ Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում, ՊԲՀ, 1976, թ. 2, էջ 66. **Дж. Надирадзе,** Археологические памятники Квирилского ущелья, Тбилиси, 1975, աղ. VII, XVII:

ժամանակաշրջանի հուշարձաններում համեմատաբար հաճախակի հանդիպող առարկաներից են[5]*:*

3. Մետաղյա գավաթների կամ սափորների բռնակներ՝ բրոնզ, երկու հատ (աղ. I, նկ. 5, 6): Բուն հռոմեական-իտալիկյան համարվող կանթ-բռնակներով այս գավաթ-սափորները լայն տարածում են ունեցել հռոմեական կայսրության գրեթե բոլոր հատվածներում: Հայաստանում մեզ հայտնի են օրինակներ Սիսիանից, Արմավիրից, Վրաստանից, Հյուսիսային Կովկասից եւ հարեւան տարածաշրջաններից: Դրանք բոլորն էլ համարվում են ներմուծված Ապենինյան թերակղզու հարավային մասում գտնվող, գեղարվեստական մետաղագործության հռչակավոր կենտրոն Կապուա քաղաքից, թեեւ չի բացառվում նման արհեստանոցների գոյությունը նաեւ կայսրության կարեւոր պրովինցիաներում (Սիրիա): Բռնակ-կանթերը վերին, հորիզոնական, կիսակլոր մասով ամրացվել են գավաթների կամ սափորների շուրթերին, իսկ ներքեւի մասում՝ իրանին: Կանթերից մեկի ներքեւի հատվածում պատկերված է տղամարդու դիմաքանդակ (օմֆալ), մյուսը զարդարված է հորիզոնական եւ տարատեսակ զարդանախշերով: Օ. Լորդկիպանիձեն, Վրաստանի տարածքում (Մցխեթա, Նաչբիսի, Բորի եւ այլն) հայտնաբերված նմանօրինակ գավաթ-սափորները եւս հռոմեական-իտալիկյան համարելով, նշում է, որ դրանք Վրաստան կարող էին ներմուծվել Հայաստանի տարածքով: Չի բացառվում, որ մեր ներկայացրած կանթ-բռնակները գտնվել են անտիկ թաղումից, եւ գանձախույզները հնագիտական արժեքավոր ուղեկցող առարկաներ են հայտնաբերել եւ վաճառել: Նմանօրինակ գավաթ-սափորները բոլոր հեղինակների կողմից թվագրվում են Ք. ա. Ա. - Ք. հ. Ա. դդ.[6]*: Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ հռոմեական համարվող նյութա-*

---

[5] Տես **Б. Аракелян,** Гарни II, результаты раскопок 1951-1955 гг., Ереван, 1957, стр. 75, նկ. 44. **Ж. Хачатрян,** Гарни V, стр. 85, նկ. 32. նույն հեղինակի՝ "Гарни V", էջ 74. **Р. Рамишвили,** Могильник и поселение в Ахалижинвани (по раскопкам 1971-1973 гг.), Жинвани I, Археологические взыскания в Арагском ущелье, Тбилиси, 1983, табл. LXXIII, նկ. 638. **Michael Vickers and Amiran Kakhidze**, Pichvnari (1998-2002), Batumi, Oxford, 2004, էջ 200. **С. Казиев**, Археологические раскопки в Мингечаури, Альбом кувшынных погребений, Баку, 1960, աղ. XXIV. **С. Есаян**, **А. Калантарян**, Ошакан I, Основные результаты раскопок 1971-1983 гг., Ереван, 1988, աղ. XLVII, LXXXI. **Ժ. Խաչատրյան**, Սիսիանի դամբարանը (մ. թ. ա. I դ. երկրորդ կես), Երեւան, 2009, էջ 55, աղ. VII:

[6] Տես **Ժ. Խաչատրյան**, Հայաստանում հայտնաբերված արեւմտա-հռոմեական մետաղյա առարկաներ, ԼՀԳ, Երեւան, 1984, էջ 71, աղ. I, նկ. 1. նույն հեղինակի՝ «Սիսիանի դամբարանը (մ. թ. ա. I դ. երկրորդ կես)», Երեւան, 2009, էջ 59, աղ. X, նկ. 2. **Գ. Տիրացյան, Ի. Կարապետյան**, Արմավիրի 1983-1984 թթ. պեղումները, ՊԲՀ, Երեւան, 1985, թ. 4, էջ 226, նկ. 7. **О. Лордкипанидзе**, Наследие Древней Грузии, Тбилиси, 1989, стр. 363-368, նկ. 182-185:

կան մշակույթի առարկաների մեծ մասն ունի իր նախատիպը հզոր հելլենիստական մշակութային արեալում[7]*:*

Դրամներ. *Դժվար է նույնիսկ ենթադրել թե ինչ պայմաններում եւ հանգամանքներում են հայտնաբերվել մեր տրամադրության տակ գտնվող դրամները (հինգն են): Դրանք կարող էին լինել պատահական գտածոներ՝ դրամական դանձերի թաղումներից: Վերջինս բնիկ հելլենական թաղումային ծիսակատարության տարատեսակներից է, երբ հանգուցյալի բերանում կամ գլխի մոտ մետաղադրամ էին դնում (տուրք Քարոնին՝ հանգուցյալին մեռյալ աշխարհի Ստիքս գետն անցկացնելու համար): Հունաստանում այն սկիզբ է առել Ք. ա. Ե. դ., իսկ հելլենիզմի տարածման ժամանակաշրջանից սկսյալ՝ նաեւ տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում (Ք. ա. Գ. դ.): Հինգ դրամներից երեքը պատկերում են Տիգրան Բ.-ին ու տարբեր չափերի եւ ատտիկյան տարբեր կշռաչափերի են, իսկ մյուս երկուսից մեկը կապադովկիական է (Արիոբարզան Գ., Ք. ա. 52-42 թթ.), մյուսը՝ Օգոստոս կայսեր դենարը, թողարկված է ժամանակակից Լիոն քաղաքում (հնում՝ Լուգդունում): Տիգրան Բ.-ի արծաթե քառադրամը (տետրադրախմա) օգտագործվել է նաեւ միջազգային առեւտրային հարաբերություններում: Օգոստոս կայսեր արծաթե դենարը տարածվել է կայսրության բոլոր երկրամասերում: Կապադովկիական Արիոբարզան Գ.-ի դրամները Հայաստանում քիչ են հանդիպում, առավել հայտնի են այդ թագավորի նախորդների անունով թողարկվածները*:*

1. Հայաստան, Տիգրան Բ., Ք. ա. 95-55 թթ.: Արծաթ, տետրադրախմա: Կշիռը՝ 16.42 գ, տրամ.՝ 29.0 մմ, առանցքների հարաբերությունը՝ 7 ժ:

Դիմերես. Արքայի կիսանդրին դեպի աջ թեքված՝ թագով եւ ապարոշով, թագի վրա աստղ՝ երկու արծիվների միջեւ:

Դարձերես. Արքան՝ Տիխեն ժայռին նստած, պարսպաձեւ թագով, աջ ձեռքին արմավենու ճյուղ, ոտքերի տակ Օրոնտես գետը՝ լողացող տղամարդու կերպարանքով: Աջից՝ ΒΑΣΙΛΕΩΣ ↓, ΤΙΓΡΑΝΟΥ ↓ *(«արքա Տիգրան»):*

Դրամը, հավանաբար, կեղծ է (աղ. III, նկ. 1):

2. Հայաստան, Տիգրան Բ., Ք. ա. 95-55 թթ.: Բրոնզե դրամ: Կշիռը՝ 4.24 գ, տրամ.՝ 15.7 մմ, կնիքների առանցքների հարաբերությունը՝ 12 ժ:

---

[7] Տես "Культура Древнего Рима", том I (редколлегия), Москва, 1985, введение. **А. Немровский**, История Древнего Мира (Античность), Москва, 2000, էջ 51:

* Դրամների մանրամասն վերլուծությունը կատարել է Հայաստանի պատմության թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Ռ. Վարդանյանը, ում հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Դիմերես. Արքայի կիսանդրին դեպի աջ թեքված՝ թագով եւ ապարոշով, թագի վրա աստղ՝ երկու արծիվների միջեւ: Գլխի վերեւում՝ A տառը:

Դարձերես. Նիկեն՝ քայլող, աջ ձեռքում պսակ: Աջից՝ [ΒΑΣΙΛΕΩΣ] ↓, ձախից՝ ΤΙΓΡΑΝ*[ΟΥ] ↓ (աղ. III, նկ. 2):*

3. Հայաստան, Տիգրան Բ., Ք. ա. 95-55 թթ.: Բրոնզե դրամ: Կշիռը՝ 2.59 գ, տրամ.՝ 17.8 մմ, կնիքների առանցքների հարաբերությունը՝ 12 ժ:

Դիմերես. Արքայի կիսանդրին դեպի աջ թեքված՝ թագով եւ ապարոշով:

*Դարձերես. Եռոտանի: Աջից՝ [ΒΑΣΙΛ]ΕΩΣ ↓, ձախից՝ [*ΤΙΓΡΑΝΟΥ*] ↓ (աղ. III, նկ. 3):*

4. Կապադովկիա, Արիոբարզան Գ., Ք. ա. 52-42 թթ.: Արծաթ, դրախմա: Կշիռը՝ 2.11 գ, տրամ.՝ 15.5 մմ, կնիքների առանցքների հարաբերությունը՝ 12 ժ:

Դիմերես. Արքայի կիսանդրին դեպի աջ թեքված՝ ապարոշով:

Դարձերես. Աթենասը կանգնած: Գրությունները չեն երեւում (աղ. III, նկ. 4):

5. Հռոմեական կայսրություն, Օգոստոս, Ք. ա. 27 – Ք. հ. 14 թթ.: Արծաթ, դենար՝ թողարկված Լուգդունում քաղաքում (ներկայումս՝ Լիոն), Ք. ա. 2 – Ք. հ. 11 թթ.: Կշիռը՝ 2.88 գ, տրամ.՝ 16.8 մմ, կնիքների առանցքների հարաբերությունը՝ 12 ժ:

Դիմերես. Կայսեր գլուխը դափնեպսակով: Շրջանաձեւ՝ CAESAR AVGVSTVS [DIVI F(elix) PATER PATRIAE] («Օգոստոս կեսար, աստծո որդի, հայր հայրենյաց»):

Դարձերես. Գայոս եւ Լուկիոս կայսրերը՝ կանգնած, նրանց միջեւ երկու վահան եւ երկու նիզակ, նիզակների միջեւ ձախից՝ լիտուուս, աջից՝ սիմպուլում, նրանց տակ՝ X (արժեչափը՝ 10 աս): Շրջանաձեւ է՝ [C(aius) L(ucius) CAESARES AVGV]STI F(ilii) CO(n)S(ul). DESIGN(atus) PR[INC(ipi). IVVENT(utis) («Գայոս եւ Լուկիոս կեսարներ, Օգոստոսի որդիներ, երիտասարդ պրինցեպսներ». աղ. III, նկ. 5):

Մեր տրամադրության տակ եղած հնագիտական առարկաների հայտնաբերման հանգամանքները թույլ չեն տալիս առավել մանրամասն եւ համարձակ քննարկել հռչակավոր Արտաշատ մայրաքաղաքի նյութական մշակույթի տարբեր խնդիրներ: Օգտվելով առիթից՝ ավելորդ չենք համարում ահազանգել մեր մշակույթին անդառնալի վնաս հասցնող դանձախուզության դեմ պայքարի խստացման անհրաժեշտության մասին:

РЕЗЮМЕ

Представленный археологический материал был обнаружен на территории древнего Арташата не в следствии систематических раскопок, проводимых научными методами, а путем разграбления и уничтожения памятников кладоискателями. Цель данного отчета – сделать возможным использование данного материала в научных кругах и как-то восполнить некоторый пробел в изучении материальной культуры Арташата – древней столицы античной Армении.

SUMMARY

The presented archaeological material was discovered on the territory of old Artashat not as a result of systematic excavations conducted by scientific methods, but as a result of looting and destruction of monuments by treasure hunters. The purpose of this report is to make it possible to use this material in scientific circles and somehow fill a certain gap in the study of the material culture of Artashat, the old capital of ancient Armenia.